



Հայաստանի կենսաբ. հանդես, 3(68), 2016

ԷՎՐԻԿ ԳԵՂԱՄԻ ԱՖՐԻԿՅԱՆ



Կյանքի 91-րդ տարում իր մահկանացուն կնքեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Էվրիկ Գեղամի Աֆրիկյանը: Նա ծնվել է 1925թ. մայիսի 15-ին Երևանում, 1947թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: Ուսման հետ միաժամանակ աշխատել է կլինիկական վիրաբուժության բաժանմունքում: Ավարտելով ինստիտուտը՝ Է.Գ. Աֆրիկյանը ընդունվում է ասպիրանտուրա և շարունակում իր գիտական գործունեությունը ԽՍՀՄ ԳԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտում՝ հանրաճանաչ մանրէաբան Ն.Ա. Կրասիլնիկովի ղեկավարությամբ:

1951 թվականին Է.Գ.Աֆրիկյանը հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը, վերադառնում Երևան և շարունակում իր գիտական գործունեությունը ՀԽՍՀ ԳԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտում, սկզբում որպես գիտաշխատող (1951-1953թթ), այնուհետև որպես ինստիտուտի գիտքարտուղար (1953-1963թթ), իսկ 1963թ. նշանակվում է Միկրոբիոլոգիայի ինստիտուտի տնօրեն և ղեկավարում այն շուրջ 38 տարի: 2001թ. նրան շնորհվում է Միկրոբիոլոգիայի ինստիտուտի պատվավոր տնօրենի կոչում:

Է.Գ. Աֆրիկյանի ջանքերի շնորհիվ Հայաստանում ստեղծվեց միջատասպան մանրէների հարուստ և կարևոր կիրառական նշանակություն ունեցող հավաքածու, որը ներկայումս պահպանվում է Մանրէների Ավանդադրման Կենտրոնի հավաքածուում: Միջատասպան մանրէների հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին Աֆրիկյանի դոկտորական ատենախոսությունում, որը նա հաջողությամբ պաշտպանեց 1970թ. Մոսկվայում: Այնուհետև հրատարակվեց նրա մենագրությունը՝ «Էնտոմոպաթոգեն բակտերիաները և դրանց նշանակությունը» (ռուսերեն, Երևան, 1973թ.):

1975թ պրոֆեսոր Աֆրիկյանը նախաձեռնեց և ղեկավարեց հետազոտությունների մի նոր բնագավառ՝ սինթետիկ պոլիմերային նյութերի քայքայումը մանրէների կողմից: Այդ նպատակով Միկրոբիոլոգիայի ինստիտուտում ստեղծվեց նոր հատուկ բաժին, ինչպես նաև մաթեմատիկական հաշվողական կենտրոն՝ հատուկ խնդիրների մշակման և ծրագրավորման համար: Նշված հետազոտությունները հովանավորվում և ֆինանսավորվում էին ԽՍՀՄ-ի «Էներգիա» ԳԱ համալիրի կողմից: Վերոնշյալ հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին անգլերեն լեզվով 2005 թվականին նրա և իր աշխատակիցների կողմից հրատարակված մենագրության մեջ (Երևան, 2005):

Ակադեմիկոս Է.Գ. Աֆրիկյանի հմուտ ղեկավարության շնորհիվ, Միկրոբիոլոգիայի ինստիտուտը դարձավ տվյալ բնագավառի առաջատար կազմակերպություն, որը համակարգում էր նշված ուղղությամբ իրականացվող հետազոտությունները ԽՍՀՄ-ում: Ինստիտուտում բացվեցին ֆոտոսինթեզող բակտերիաների, երկրաբանական մանրէաբանության, կենսաքիմիայի, տրանսֆորմացիայի և հյուսվածքային կուլտուրաների

լաբորատորիաներ: Նրա ջանքերով Աբովյան քաղաքում կառուցվեց Նոր համալիր, որը դարձավ ընդհանուր և կիրառական մանրէաբանության առաջատար և լայն ճանաչում գտած գիտական կենտրոններից մեկը:

1993թ. ակադեմիկոս Է.Գ. Աֆրիկյանը հիմնադրեց Նաև Մանրէների ավանդադրման կենտրոնը, որտեղ պահվում և ուսումնասիրվում են տարբեր խմբերին պատկանող մանրէների շուրջ 13000 շտամներ: Հավաքածուն ունի կարևոր ռազմավարական նշանակություն և դասվում է ազգային մեծ արժեք ներկայացնող կազմակերպությունների շարքին: Այն ընդգրկված է Մանրէների Համաշխարհային Հավաքածուի (WFCC) կազմում:

Ակադեմիկոս Է.Գ. Աֆրիկյանը ղեկավարել է ավելի քան տաս միջազգային գիտական ծրագրեր և պայմանագրեր, որոնք նվիրված են եղել մանրէաբանության արդի խնդիրների ուսումնասիրմանը և ֆինանսավորվել են NACA-ի, ԱՄՆ-ի տարբեր կազմակերպությունների, Եվրոպական Տիեզերական Գործակալության, CRDF-ի, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի և այլնի կողմից: Շուրջ տաս տարի Միկրոբիոլոգիայի ինստիտուտը Է.Գ. Աֆրիկյանի ղեկավարությամբ համատեղ հետազոտություններ է իրականացրել Գյուլբենկյանի գիտահետազոտական ինստիտուտի հետ (Պորտուգալիա)՝ նվիրված խմորասնկերի և ֆերմենտների առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Որպես հրավիրված մասնագետ ակադեմիկոս Է.Գ.Աֆրիկյանը գիտահետազոտական աշխատանքներ է իրականացրել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Կանադայի, Ճապոնիայի, Ավստրալիայի ճանաչված գիտական կենտրոններում: Բազմիցս հանդես է եկել զեկուցումներով տարբեր միջազգային գիտաժողովներում:

Մեծ է ակադեմիկոս Է. Աֆրիկյանի դերը Հայաստանում մանրէաբանական արդյունաբերության զարգացման գործում: Նրա ակտիվ մասնակցությամբ են հանրապետությունում ստեղծվել լիզինի գործարանը (քաղաք Չարենցավան), Կենսաքիմիական պատրաստուկների և խմորասնկերի գործարանները (քաղաք Աբովյան):

Է.Գ.Աֆրիկյանը երկար տարիներ եղել է «Հայաստանի կենսաբանական հանդես» ամսագրի գլխավոր խմբագիր, մի շարք միջազգային գիտական ամսագրերի խորհրդի անդամ, ղեկավարել է միկրոբիոլոգիա և կենսատեխնոլոգիա մասնագիտություններով ատենախոսությունների պաշտպանության Խորհուրդը, պատրաստել մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառների բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

1971 թվականից Է.Գ.Աֆրիկյանը ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ է, 1982 թվականից՝ ակադեմիկոս, իսկ 1986 թվականից՝ գիտության վաստակավոր գործիչ: Շնորհիվ միջազգային լայն ճանաչման՝ նա ընտրվել է նաև Մանրէների Համաշխարհային Հավաքածուի գործադիր կոմիտեի, Կարգաբանության միջազգային ընկերության գիտնականների ասոցիացիայի (INTAS) անդամ:

2009 թվականին ակադեմիկոս Է.Գ.Աֆրիկյանը հիմնադրել և ղեկավարել է Հայաստանի Մանրէաբանական ասոցիացիան, որը միաժամանակ Մանրէաբանների Եվրոպական Ֆեդերացիայի (FEMS) լիիրավ անդամ է: Ակադեմիկոս Է.Գ. Աֆրիկյանը հեղինակ է 6 մենագրության և շուրջ 400 գիտական հոդվածների:

Երկարամյա բեղմնավոր գիտակազմակերպական աշխատանքի համար նա արժանացել է մի շարք կառավարական պարգևների՝ «Պատվո նշան» շքանշանի, «Անանիա Շիրակացի» մեդալի, Ս.Պ. Կոռոյովի անվան մեդալի: Որպես Հայրենական Մեծ պատերազմի վետերան պարգևատրվել է «За победу над Германией», «За оборону Кавказа», «Двадцать лет Победы» մեդալներով:

Էվրիկ Գեղամի Աֆրիկյանի՝ անվանի գիտնականի, հայրենասեր մտավորականի, սկզբունքային քաղաքացու հիշատակը հավերժ կապրի Նրան ճանաչողների սրտերում:

«Հայաստանի կենսաբանական հանդեսի» խմբագրություն